ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿՅԱՆՔ ЖИЗНЬ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1968 թ. հուլիս-դեկտեմբեր)

ԲՈՒԼԳԱՐԻԱ

Պլովդիվի հայ մշակույթի տանը հուլիսի 3-ին հանդիսավոր երեկույթ է կազմակերպվել՝ նվիրված հայ գրերի գյուտին։

Ռումինացի գիտնական Ն. Յորգան իր ելույթում, ի միջի այլոց, նշել է. «Որքան հաճելի է, երբ հայ ժողովուրդը կմտածե տոնել ոչ թե իր մղած պատերազմները, կամ նշել իր կրած տառապանքները, այլ կտոնե իր հոգեկան նվաճումները»։

«Երևան», 11 հուլիսի

* * *

Վառնայի գեղարվեստական գործունեության տան հանդիսասրահում տեղի է ունեցել բուլղարահայ «Երևան» մշակութային միության Պլովդիվի մասնաճյուղի «Արամ Խաչատրյան» էրգչախմբի համերգը Հ. Տամաճյանի ղեկավարությամբ։ Կատարվել են եվրոպական և հայկական երաժշտության ընտիր հատվածներ։

«Արարատ», 17 հուլիսի

* * *

Հոկտեմբերի 13-ին Վառնայում և Ռուսեում հանդիսավորությամբ տոնվել է Երևանի հիմնադրման 2750-ամյակը։

«Երևանի» սրահում կազմակերպվել է պատմական նկարների ցուցահանդես՝ նվիրված Էրեբունի-Երևանին։

«Երևան», 25 հոկտեմբերի, 1 նոյեմբերի

* * *

Նոյեմբերի 1-ին Սոֆիայում՝ «Երևան» ակումբում, նշվել է Երևանի հիմնադրման 2750-ամյակը։ Երեկոյին նախագահել է Կ. Գուրպանճյանը, Երևանի պատմությանն է եղել նվիրված Ս. Հալաճյանի ելույթը։

Տրվել է ճոխ համերգ։

«Երևան», 8 նոյեմբերի

* * *

Հոկտեմբերի 25-ին և 28-ին Բազարջիկում և Խասքովոյում տեղի են ունեցել Երևանի 2750-ամյակին նվիրված տոնակատարություններ։

«Երևան», 8 նոյեմբերի

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Արդեն մի տարի է, որ Հունգարա-սովետական բարեկամության ընկերությունում ստեղծվել է Հունգարահայերի ակումբը։

Հունգարիայում այժմ ապրում են հայկական ծագում ունեցող մի քանի հազար ընտանիքներ, որոնցից 400-ը՝ Բուդապեշտում։

Նորաստեղծ ակումբը, որը միավորում է Հունգարահայերին, նպատակ ունի նրանց հաղորդակից դարձնել մայր հայրենիքին, երիտասարդներին սովորեցնել մայրենի լեզուն։ Ակումբն իր անդամներին մատակարարում է գրքեր, թերթեր, ամսագրեր։ Արդեն 30 ընտանիքներ խոսում են հայերեն։ Կապեր են հաստատվում հայ ականավոր արվեստագետների, գիտնականների, գրողների հետ։ Բուդապեշտի զանազան մասերում ակումբը կազմակերպում է Հայաստանի անցյալին ու ներկային, մշակույթին, ժողովրդական սովորույթներին նվիրված դասախոսություններ։

«Աշխարհ», 27 նոյեմբերի

* * *

Պեշտի համալսարանը արևելագիտության հետ միասին զբաղվում է նաև հայագիտությամբ։

Հայագիտությունը Հունգարիայում մեծ ավանդույթ ունի։ Դեռևս անցյալ դարում լույս էն ընծայվել հայագիտական գրքեր և «Արմենիա» անունով ամսաթերթ։ 60 տարի առաջ պրոֆ. Լուկաս Պատրուբանյանը Պեշտի համալսարանում 6 տարի շարունակ դասավանդել է հայոց լեզու։ Այժմ հայագիտական աշխատանքները կենտրոնացած են Պեշտի համալսարանի

փիլիսոփայական բաժնի կովկասագիտության ճյուղում։ Հայագիտության զարկացմանը նպաստում են հատկապես Հունգարիայի ակադեմիայի փոխնախագահ և արևելագիտական հանձնաժողովի նախագահ ակադ. Լ. Լիգիտը և պրոֆ. Կ. Ցեգլեդը։

Պատմությանը, լեզվաբանությանը նվիրված աշխատանքների հետ մեկտեղ հրատարակվում են թարգմանություններ հայ գրականությունից։ Թարգմանվել են «Հայկական հեքիաթները», Պարույր Սևակի բանաստեղծությունների ժողովածուն՝ Պալ Սալմաշիի կողմից։ Նախատեսվում է հրատարակել հայկական բանաստեղծությունների հատընտիրը։

«Զարթոնք», 4, 5 դեկտեմբերի

ՀԱՐԱՎԱԼԱՎԻԱ

Բելգրադից հետո հայկական աչքի ընկնող գաղութ է Սկոպլեի գաղութը, որտեղ ապրում են 42 հայ ընտանիքներ։

1947 թ. Սկոպլեի հայերից Հարություն Սյուրմելյանը մակեդոնացի արվեստագետների և Հարավսլավիայի արվեստի և մշակույթի մինիստրության օժանդակությամբ հիմնում է Սկոպլեի օպերային թատրոնը, որտեղ ինքը լինելով առաջին մենակատարը, բազմաթիվ ելույթներ է ունենում։ Նրա երկու զավակներից ավագը՝ Ղազարոս Սյուրմելյանը, որը համարվում է փայլուն ապագա ունեցող բալետի մենակատար, մեծ հաջողությամբ ելույթներ է ունենում Կանադայի, Միացյալ Նահանգների, Մեքսիկայի քաղաքներում։

«Ջահակիր», 21 նոյեմբերի

ՍԻՐԻԱ

Դամասկոսի Հ. Բ. Ը. միության Հ. Ե. ընկերակցությունը նոյեմբերի 3-ին կազմակերպել է հանդիսավոր երեկո՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։

«Զարթոնք», 15 նոյեմբերի

ԱՄՆ

Կա՛իրեում լույս տեսնող ֆրանսերեն «Իմաժ» շաբաթաթերթը նոյեմբերի սկզբի իր համարներից մեկում երկու էջ է նվիրել Երևանի 2750-ամյակին։ Ամփոփ տրված են Երևանի պատմական անցյալն ու ներկան և մի շարք նկարներ Երևանի տեսարժան վայրերից։

«Արև», 4 նոյեմբերի

* * *

Կա՛իրեի հայկական ընթերցասրահում նոյեմբերի 22-ին նշվել է Երևանի 2750-ամյակը։ Այս հանդիսությունը կազմակերպվել է արաբ հասարակայնության համար։

Հանդեսի նախագահ Նուպար Պալայանը արաբերեն լեզվով արտասանել է բացման խոսք և ողջունել արաբ հասարակայնության ներկայացուցիչներին։ Զեկուցումով հանդես է եկել արաբագետ Արամ Մովսիսյանը, որը հանգամանալից ներկայացրել է հայ ժողովրդի պատմական անցյալն ու ներկան և Երևանի հիմնադրման պատմությունը։ Այնուհետև ելույթ է ունեցել ԱՄՀ-ի երիտասարդության նախարարության ներկայացուցիչը։

«Ջահակիր», 28 նոյեմբերի

ԼԻԲԱՆԱՆ

Լիբանանցի թարգմանիչ Նիգոլա Թաուիլը շնորհակալ գործ է կատարում՝ արաբ ընթերցողներին ծանոթացնելով հայ գրականությանը։ Նա Բեյրութի «Էլ Էտեա» թերթում հրատարակել է Հովհաննես Թումանյանի «Նեսոյի քարաբաղնիսը» պատմվածքի թարգմանությունը։

Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ նա սկսել է թարգմանել «Տիքորը»։

«Արարատ», 16 հուլիսի

* * *

Լիբանանահայ նշանավոր երգչուհի Լուիկա Պողոսպալյանը արժանացել է Բրյուսելի միջազգային մրցանակաբաշխության «Պատվո մրցանակին» և ոսկե մեդալին, ինչպես նաև Վերդիի ծննդավայր Պուսեթթոյլում՝ «Վերդիական երգիչների» միջազգային մրցանակաբաշխության առաջին մրցանակին։

«Ջահակիր», 19 սեպտեմբերի

* * *

Բեյրութի հայ երիտասարդաց ընկերակցությունը հայկական առաջին օպերայի ստեղծման հարյուրամյակի առթիվ «Կազինո դյու Լիբան» թատերասրահում առաջին անգամ ներկայացրել է Տիգրան Չուխաջյանի «Զվարթ» օպերետը։

«Սևան», 16 հոկտեմբերի

* * *

Բեյրութում համերգներ է տվել Բուխարեստի օպերայի հռչակավոր տենոր Կարբիս Զորյանը։

«Աշխարհ», 19 հոկտեմբերի

* * *

Բեյրութի Պուրճ Համուտի Մասիս մարմնամարզական միությունը հոկտեմբերի 20-ին հանդիսավոր ձևով նշել է Երևանի հիմնադրման 2750-ամյակը։

«Արարատ», 30 հոկտեմբերի

Հոկտեմբերի 28-ին «Կալերի Լամաթեորի» դուցասրահում բացվել է լիբանանահայ տաղանդավոր գեղանկարիչ Ասատուր Պզտիկյանի նկարների ցուցահանդեսը, որին ներկա են եղել մեծ թվով հայ, արաբ և օտար արվեստագետներ։

«Զարթոնք», 1 նոյեմբերի

* * *

Բեյրութում հոկտեմբերի 27-ից սկսվել է Երևանի 2750-ամյակին նվիրված հանդիսավոր նիստերի շարքը։ Վերջին նիստը տեղի է ունեցել դեկտեմբերի 26-ին, որ կազմակերպել էր Թեքեյան մշակութային միությունը։ Այդ օրը ելույթ են ունեցել Ե. Պապայանը, Ռ. Խրլոպյանը, Գերսամ Ահարոնյանը և արաբ բանաստեղծ Սաիդ Աքլը։

«Հառաջ», 3 նոյեմբերի,
«Զարթոնք», 1 հունվարի

* * *

Բեյրութում լույս է տեսել Մեվլան Զադե Ռիֆատի «Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը» աշխատության նոր հրատարակությունը՝ Մեծ եղեռնի 53-րդ տարեդարձի առթիվ։

«Երիտասարդ Հայաստան», 8 նոյեմբերի

* * *

Բեյրութի Հայկազյան կոլեջի հայագիտական ամբիոնը հիմնականում զբաղվում է հայագիտության զարգացման և տարածման գործով։

Կոլեջը անցյալ տարիներին կազմակերպել է մի շարք դասախոսություններ՝ նվիրված հայ լեզվի պատմության և գրականության հարցերին։

«Արարատ», 1 նոյեմբերի

ԻՐԱՆ

Հ. Շիրազի «Բիբլիական» պոեմի պարսկերեն թարգմանությունը (թարգմանիչ Ալեք Խաչատրյան) տպագրվել է Թեհրանի «Խուշե» («Հասկ») ամսագրում։

Բանաստեղծ, քննադատ Ահմադ Շամլուն, «Խուշեի» ընթերցողներին ներկայացնելով «Բիբլիականը», գրում է, որ դա «Հայ ժողովրդի հոգու ճիչն է, ժողովուրդ, որ տարիներ շարունակ անարդարացի տառապել է զազիր ու հանցագործ օտարների ճիրաններում, ճիչն է մի ժողովրդի, որը 1600 տարի առաջ ստեղծած և ցայսոր հարատևած իր գրով ստեղծել է գիրը, գրականությունը, բարձր մշակույթը»։

«Սովետական Հայաստան», 17 նոյեմբերի,
«Ջահակիր», 12 սեպտեմբերի

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Պալկաթայում բացված է Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված լուսանկարների ցուցահանդեսը։

«Սովետական Հայաստան», 24 դեկտեմբերի

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Նոյեմբերի 23-ից սկսած Հունաստանի Նիկիա քաղաքում սկսել է հրատարակվել «Նոր աշխարհ» անունով ազգային-քաղաքական շաբաթաթերթ։

«Աշխարհ», 11 դեկտեմբերի

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պոլսի կենտրոնական Սանուց միությունը երաժշտական հանձնախումբը կազմակերպել է ենվանի երաժշտագետ Աշոտ Պատմաքրյանի դասախոսությունները հայկական արվեստի մասին։

«Աշխարհ», 9, 23 հոկտեմբերի

* * *

Կ. Պոլսում մահացել է Թոփգափուի Լևոն-Վարդուհյան վարժարանի 35-ամյա տնօրեն, կրթության վաստակավոր մշակ Պողոս Յաճիյանը։

«Աշխարհ», 9 հոկտեմբերի

ՖՐԱՆՍԻԱ

Հայոց լեզու սովորել ցանկացողների համար Մարսելի հայկական եկեղեցին կազմակերպել է հայերենի դասընթացներ։

Ամեն շաբաթշաբթի և ուրբաթ օրերը ուսուցչուհի տիկ. Թագուհի Պատվականյանը դասավանդում է հայոց լեզու և պատմություն։

«Աշխարհ», 17 սեպտեմբերի

* * *

Ժան Կազալբուն «Եթե ինձ պատմած լիներին Հայաստանի մասին» վերնագրով հրատարակել է հայկական հեքիաթների և պատմվածքների ժողովածու։

«Ցումանիտեի» 1968 թ. հոկտեմբերի 10-ի համարում այս ժողովածուի մասին Պիեռ Գամառան մասնավորապես գրել է. «Քազալպուի այս հավաքածուին մեջ ուրեմն պիտի գտնենք ու վերագտնենք հայոց երկրին և հայ ժողովուրդին, անոր տառապանքներուն, անզսպելի չարաճճիությանը, անոր քաջությանը, ինչպես և բանաս-

տեղծության համար ունեցած սիրույն այլազան երեսները։ Բայց այստեղ կա նաև շեշտ մը, որ իրն է միայն, պատմելու ձև մը, որ միանգամայն ճշգրիտ և ծաղկյալ է»։

«Աշխարհ», 19 հոկտեմբերի

* * *

Փարիզի «Կալերի Սեն Սյուլպիսում» բացվել է նկարիչ Տեր-Մարգարյանի նկարների ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված են 30 նկարներ, հիմնականում նատյուրմորտ։

«Աշխարհ», 16 նոյեմբերի

* * *

«Կալերի գը Սերում» տեղի է ունեցել պաշտոնական ընդունելություն հանրահայտ նկարիչ Զարեհ Մութաֆյանին Փարիզ քաղաքի ամենից բարձր պատվանշանով՝ «լա գրանդ մեդայ դը Վերմեյլ»-ով պարգևատրելու կապակցությամբ։

Ֆրանսիական մամուլը մեծ գովասանքով է խոսում Զ. Մութաֆյանի արվեստի մասին։ «Նուվո ժուռնալ»-ը իր նոյեմբերի 8-ի համարում մասնավորապես գրում է. «Մութաֆյան, որուն շնորհուեցավ մեծ մետալը Փարիզ քաղաքին, կը ներկայացնե մեզի ոգեկոչումը Հայաստանի բնանկարներուն, ձյունածածկ լեռներուն և միջնադարյան եկեղեցիներուն, որոնք նկարուած են հրայրքով, հրապույրով և երանգային հրաշալի բնարականությամբ աոլի։ Ոչ մեկը, մինչև հիմա, Հայաստանի շուրջ այնքան սեր ու հետաքրքրություն ստեղծեց Փարիզի մեջ, որքան այս պատուական նկարիչը, հայ նկարիչներու ամենեն հայր։ Երախտապարտ ենք իրեն»։

«Աշխարհ», 16 նոյեմբերի

* * *

Երևանի 2750-ամյակի տոնակատարությունը մեծ արձագանք է գտել ֆրանսիական մամուլում։ Հոդվածներ են տպագրել «Յումանիտեն», «Ֆիգարոն», «Լը Դոֆինե Լիբեռե» թերթի աշխատակից Պոլ Դրեյֆինսը, որ Հայաստան էր մեկնել տոնակատարություններին մասնակցելու համար, պատկերազարդ հոդվածաշար է տպագրել թերթի հինգ համարներում՝ նվիրված Հայաստանին։

«Աշխարհ», 7 դեկտեմբերի

* * *

Փարիզի ուսանողների «Մարի-Նուպարդ» հայկական տանը դեկտեմբերին տեղի է ունեցել ուսանողների կողմից կազմակերպված հանդիսություն՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։

Երեկույթին իրենց տպավորություններով Երևանի մասին խոսեցին Ֆրեդերիկ Ֆեյդին, «Աշխարհի» խմբագիր Ա. Ալիքսանյանը և բանաստեղծ Ռուբեն Մելիքը։

«Աշխարհ», 25 դեկտեմբերի

ԻՏԱԼԻԱ

Միլանի Պերա պատկերասրահում հոկտեմբերի 27-ին բացվել է հայ միջնադարյան ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես, որի համար նյութ է ծառայել Հայաստան ժամանած իտալացի ճարտարապետներ Ալբակո Նովելլոյի, Հարություն Գաղանճյանի և Արմեն Մանուկյանի հայ միջնադարյան ճարտարապետական հուշարձանների լուսանկարների ճոխ հավաքածուն։

«Յառաջ», 10 նոյեմբերի

* * *

Հռոմի ազգային Սանտա Չեչիլիա ակադեմիայի կողմից նոյեմբերի 16-ին կազմակերպվել է հանրահռչակ մեցո-սոպրանո Քեթի Պերպերյանի համերգի երեկո ակադեմիայի սրահում, որտեղ բախտ է վիճակվում ելույթ ունենալու միմիայն անվանի երաժիշտներին։

Պերպերյանի երգացանկը շատ բազմազան է, հայկական, իսպանական, պարսկական և այլ ժողովրդական երգերի հետ մեկտեղ նա երգում է դասական երաժշտությունից և համարվում է արդի երաժշտության լավագույն մեկնաբանը։ Նա մասնակցել է բազմաթիվ փառատոների։ Երգում է քսան լեզուներով և բոլոր համերգներին անպայմանորեն կատարում է հայերեն երգեր։

«Զարթոնք», 14 դեկտեմբերի

* * *

Միլանի «Կաղա Էդիտրիչե Չեչինա» հրատարակչությունը հրատարակել է Չարենցի բանաստեղծությունների իտալերեն թարգմանված ժողովածուն։ Առաջարանում շարադրված են բանաստեղծի կյանքն ու ստեղծագործական ուղին։

Ժողովածուն, որը հրատարակվել է «Բոլոր ժամանակների մեծ բանաստեղծները» մատենաշարով, ընդգրկում է Չարենցի 28 բանաստեղծությունները Մարիո Վերդոնեի թարգմանությամբ։

«Գրական թերթ», 3 հունվարի 1969,
«Հայրենիքի ձայն», 1 հունվարի 1969

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Օգոստոսի 4-ից 8-ը տեղի ունեցավ գերմանախոս երկրների հայ գաղութների ներկայա-

ցուցիչների խորհրդակցական համագումար Շվեյցարիայի Կվաթ դյուղաքաղաքում։

Համագումարն ընտրել է իր ժամանակավոր գործադիր կենտրոնը, որը կոչվում է «Գերմանախոս երկրների հայ գաղութների գործադիր կեդրոն»։ Գործադիր կենտրոնի նպատակն է դերմանախոս ժողովուրդներին ծանոթացնել հայկական հարցի հետ, տարածել «Դի Շտիմմե Արմենիրնս» թերթը, գրել տալ հայկական հարցը շոշափող գրքերի հրատարակմանը և այլն։

Խորհրդակցական համագումարը հանձնարարել է իր գործադիր կենտրոնին՝ կապ հաստատել Եվրոպայի բոլոր հայ գաղութների հետ և պատրաստվել համաեվրոպական համագումարի հրավիրմանը։

«Պայքար», 9 հոկտեմբերի

ԱՆԳԼԻԱ

Լևոն Զավեն Սյուրմելյանը անգլերեն հրատարակել է հայ ժողովրդական հեքիաթների հատընտիրը՝ «Անմահական խնձոր» խորագրով, որը միաժամանակ լույս է տեսել Լոնդոնում և Լոս-Անջելոսում «Օրինակելի աշխատանքների հավաքածու» մատենաշարով։

Հատորը պարունակում է 40 հեքիաթներ։ Թարգմանությունների համար որպես բնագիր Սյուրմելյանը վերցրել է Հայաստանի ակադեմիայի կողմից հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակը, ընտրելով ավելի բնորոշ տարբերակները։

Սյուրմելյանը ժողովածուին կցել է ընդարձակ ներածական, իսկ վերջում մանրամասն ծանոթագրություն՝ իր օգտագործած հեքիաթների սկզբնաղբյուրների, հիշատակած անունների և այլնի վերաբերյալ։

«Ջահակիր», 28 նոյեմբերի

* * *

Լոնդոնի ազգային և եկեղեցական խորհրդի վարչության նախաձեռնությամբ դեկտեմբերի 29-ին Լոնդոնում տոնվել է Երևանի հիմնադրման 2750-ամյակը։ Հանդեսը վարել է Լոնդոնի համալսարանի Կովկասյան ուսմանց վարիչ պրոֆ. Լասկը։ Ելույթ են ունեցել հայ գիտնական, պրոֆ. Մկրտիչ Շահինը, Բրիտանական թանգարանի վարիչներից ակադեմիկոս Պանեթը, պպ. Հայկ Գալուստյանը, Աստուր Կյուղելյանը, Հարություն Այվազյանը և օր. Լուիզ Վարդուկյանը։

«Աշխարհ», 11 հունվարի

ԳԵՏ

Արևմտյան Գերմանիայում հայերի թիվը հագիվ հասնում է հազարի։ Բեռլինում հայկական համայնքը ստեղծվել է 1920 թ.։ Համայնքի կազմակերպություններից մեկն էր «Հայ վարժարանական միությունը», որի ակնառու դեմքն էր Կոմիտաս վարդապետը։

Ներկայումս 100—150 հայեր ապրում են Բեռլինում, 200—300՝ Համբուրգում, 150—200՝ Մյունիխում և մի փոքր մաս՝ Շտուտգարդում։ Բեռլինում գործում է մասնավորապես «Հայ երիտասարդական միությունը»։

«Աշխարհ», 9 նոյեմբերի

ԱՄՆ

Լոս-Անջելոսի Հայ թատերական միությունը սեպտեմբերի 14-ին ներկայացրել է «Չարշրջր Արթին Աղա» թատերգությունը Շավարշ Մանուկյանի բեմադրությամբ։

«Նոր օր», 13 սեպտեմբերի

* * *

Շվեյցարացի հայագետ պրոֆ. Ռոբերտ Կոտելը Կալիֆորնիայի համալսարանի կողմից հրավիրված է երկու ամսով դասախոսություններ կարդալու հայոց լեզվի պատմության մասին։

Պրոֆեսորը 65 տարեկան է, ժնևի համալսարանում դասավանդում է լատիներեն գրականություն և ընդհանուր լեզվաբանություն։

«Աշխարհ», 17 սեպտեմբերի

* * *

Նյու-Յորքի Բարեգործականի սրահում հոկտեմբերի 1-ին բացվել է եգիպտահայ նկարիչ Ս. Սամսոնյանի նկարների ցուցահանդեսը։ որի բացմանը ներկա են եղել բազմաթիվ արվեստագետներ։

«Արարատ» 29 հոկտեմբերի

* * *

Հոկտեմբերի 11-ին Հ. Բ. Ը. միության Նյու Ինգլենդի կենտրոնում տեղի է ունեցել հայ մշակույթին նվիրված ասմունքի երեկո։ Արտասանվել են Սիամանթոյի, Դանիել Վարուժանի և Վահան Թեքեյանի բանաստեղծությունները։

«Աշխարհ», 20 նոյեմբերի

ԿԱՆԱԴԱ

Մոնրեալի հայկական գաղութը նոյեմբերին և դեկտեմբերին տոնել է Երևանի հիմնադրության 2750-ամյակը։ Տոնակատարությունը նախաձեռնել է Թեքեյան մշակույթի միությունը։

«Պայքար», 14 նոյեմբերի

Տորոնտոյի հայ գաղութը նոյեմբերի 30-ին մեծ հանդիսավորությամբ կատարել է նորաստեղծ Թեբեյան մշակութային միության բացումը։

«Զարթոնք», 7 դեկտեմբերի

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Բուենոս-Այրեսի սրահներից մեկում բացվել է Հարավային Ամերիկայի հայ նկարիչների առաջին ցուցահանդեսը, որին մասնակցել են 20 նկարիչներ։

Հայ նկարիչների գործերը մեծ գնահատանքի են արժանացել արվեստասեր հասարակայնության կողմից։

«Ջահակիր», 22 օգոստոսի

* * *

Բուենոս-Այրեսում տոնվել է Երևանի հիմնադրման 2750-ամյակը։

«Սևան», 11 դեկտեմբերի

Ն. ՎԱՐԴԱՆԵՅԱՆ